ՀՀ ՇՄ նախարար Հակոբ Սիմինդյանին
ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Հեռ՝ +374 11 818559
Էլ. հասցե՝ minenv@env.am

Անկախ լրագրողներ՝ Վահե Օհանյանից
Թեհմինե Ենոքյանից

Ծանուցման հասցե՝ vaheohanyan@gmail.com,
yenoqyantehmine@gmail.com,
Հեռ. 099858981, 093848476

Հարցում

Հարգելի պրն. Սիմինդյան,

Ցանկանում ենք տեղեկացնել Ձեզ, որ մեր թիմը ներկայումս աշխատում է «Ջրի գինը» վավերագրական ֆիլմի ստեղծման վրա: Խնդրում ենք տրամադրել մեզ ստորև ներկայացված հարցերի պատասխաններն ու տվյալները:

1. Որքա՞ն ջուր է կուտակվել Հայաստանի ջրամբարներում վերջին 10 տարվա ընթացքում:

2. Որքա՞ն ջուր է կուտակվել ջրամբարներում 2023 թվականի ընթացքում, եթե եղել են նվազումներ, որո՞նք են պատճառները:

3. Տարեկան քանի՞ խ/մ ջուր է արտադրվում ՀՀ -ում:

4. Որո՞նք են ջրային պաշարների կորուստների պատճառները և քա՞ նի տոկոս է կազմել ջրային ռեսուրսների կորուստը Հայաստանում վերջին 30 տարիներին՝ ըստ պաշտոնական տվյալների, խնդրում ենք տրամադրել տվյալները՝ ըստ տարիների:

5. Ի՞նչ կոնկրետ քայլեր է ձեռնարկվում ներկայումս ջրային ռեսուրսների կորստի ծավալները նվազեցնելու, ջրային ռեսուրսների կառավարման խնդիրները բարելավելու ուղղությամբ. նշել գործողությունների պլան և ժամկետներ:

6. Արյդո՞ք ներկայումս եվ առաջիկա 5 տարիներին կառուցվող ջրամբարները կլուծեն ջրային ոլորտի խնդիրները, ջրային կառավարման եվ ջրային կորոստների խնդիրները:

7. Ինչպես հայտնի է վերջին տասնամյակներին բավական պակասել է Սևանա լճի սնուցումը ավազանի գետերի ջրերով, որը բացի կլիմայական փոփոխություններից ուղղակիորեն արդյունք է գետերի վերին հոսանքներից տարբեր նպատակներով ջրառների իրականացման, որի պատճառով էլ հատկապես ամառային ամիսներին, գետերով դեպի լիճ են լցվում հիմականում բնակավայրերից եկող չմաքրված կեղտաջրերը: Որպես ՇՄ նախարար, ինչպե՞ս եք գնահատում Սևանա լճի ավազանում ջրամբարների կառուցումը: Արդյո՞ք դրանք ավելի բացասական ազդեցություն չեն ունենա լիճը գետերի թարմ ջրով սնուցման էլ ավելի նվազեցման վրա:

8. Արդյո՞ք նոր ջրամբարների կառուցման ռազմավարության մշակման ընթացքում հաշվի են առնվել Կլիմայի Փոփոխության «Հարմարվողականության ազգային ծրագիր Հայաստանում միջնաժամկետ եվ երկարաժամկետ պլանավորման առաջխաղացման համար 2022-2026թթ.» զեկույցում մատնանշված մարտահրավերները:

9. Ի՞նչ քայլեր է ձեռնարկել ԾՄ նախարարությունը նվազեցնելու համար ՓՀԷԿ-երի կողմից ջրի օնօրինական օգտագործումը:

10. Գետերի ցամաքելու պատճառները որոնք են, որքան տոկոս են օգտագործում ՓՀԷԿ-երը, և հանքարդյունաբերական ընկերությունները:

11. Մեր շատ գետերի վրա անհեռատեսորեն կառուցված և շահագործվող ՓՀԷԿ-երի պատճառով այդ գետերի ավազանները զրկվել են էկոհամակարգերի պահպանման համար պահանջվող պայմաններից՝ նպաստելով այդ տարածքների անապատացման երևույթների առաջացմանն ու զարգացմանը, որն էլ իր հերթին բերում է սոցիալական լարվածության աճ և նպաստում կլիմայի փոփոխության արագացմանը: Ի՞նչ է անում նախարարությունը այս խնդրի լուծման և բնական էկոհամակարգերի պահպանման գործում:

Հարգանքով՝

Վահե Օհանյան

Թեհմինե Ենոքյան

19.05.2023